ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
19.12.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱԾՁԲ-25/19 գնման պայմանագրի

ք. Երևան «09» 04 2026թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի Հանրապետության Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Դ. Ղուլյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 26.03.2026թ. N 360-Ն որոշումը և տեխնիկական վերլուծության և խորհրդատվության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 19.12.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱԾՁԲ-25/19 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրում ավելացնել նոր 7.14 կետ՝ հետևյալ խմբագրությամբ.

«7.14 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցումն իրականացվում է համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում է նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված են ֆինանսական միջոցներ, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:»:

1.1.2 Հաստատել Պայմանագրի 2026 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը բաղկացած են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«Հայաստանի Հանրապետության Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Արշակունյաց 23
կառավարական տուն 3	ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 900018003146
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 02512069
Հ/Հ 900011059632	Տնօրեն՝
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	
---------- Վ. Հարությունյան	---------- Դ. Ղուլյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
19.12.2025թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԾՁԲ-25/19 գնման պայմանագրի
«09» «04» 2026թ. կնքված N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հերթական նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	2025թ. վճարված գումար	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71621100/2	ՀՀ Արագածոտնի մարզի «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ գլխավոր մասնաշենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի տեխնիկական վերլուծության և խորհրդատվության ծառայություններ	-	-	-	-	984 000	984 000	984 000	984 000	984 000	984 000	984 000	984 000	984 000	984 000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011059632
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝
_____ Վ. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Հայաստանի Հանրապետության Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Արշակունյաց 23
ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն
Հ/Հ 900018003146
ՀՎՀՀ 02512069
Տնօրեն
_____ Դ. Ղուլյան
(ստորագրություն)
Կ.Տ.